

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/13

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Սվետլանա» ՍՊԸ գանգատը թյուրիմացաբար հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրված գումարն իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ չներառելու վերաբերյալ:

«Սվետլանա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Սվետլանա» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ իրեն պատկանող հանրային սննդի օբյեկտը 30 մ.ք. (հաստատագրված վճարով աշխատող) 2015 թ-ի նոյեմբերի 11-ին թյուրիմացաբար ՀԴՄ է մուտքագրվել 960.010.000 դրամ, սակայն ՀԴՄ կտրոնը չի պահպանվել:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ ընկերությունը խնդրում է հանձնարարել Գյումրու ՏՀՏ-ին «Սվետլանա» ՍՊԸ-ին պատկանող ՀԴՄ-ում թյուրիմացաբար մուտքագրված 960.010.000 դրամը ելքագրել և հաշվի չառնել:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Սվետլանա» ՍՊԸ-ն ք.Արթիկ, Տուֆագործների 39 հասցեում գրառվում է հանրային սննդի գործունեությամբ: 11.11.2015 թ-ին սխալմամբ ընկերության ՀԴՄ (գրանցման համար՝ 31300408) է մուտքագրվել 960.010.000 դրամ, սակայն համապատասխան կտրոնը չի պահպանվել:

Նշվեց նաև, որ ընկերության հանրային սննդի օբյեկտի սպասարկման մակերեսը կազմում է 30 մ², իսկ միջին ամսեկան հասույթը՝ 650.000-ից մինչև 750.000 դրամ:

ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում «Սվետլանա» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը:

Միևնույն ժամանակ, «Սվետլանա» ՍՊԸ-ի կողմից շահագործվող ՀԴՄ 960.010.000 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ ընկերության հանրային սննդի օբյեկտի սպասարկման մակերեսը կազմում է ընդամենը 30 մ², իսկ միջին ամսեկան հասույթը՝ 650.000-ից մինչև 750.000 դրամ: Այսինքն ակնհայտ է, որ նման ելակետային տվյալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտի մոտ մեկ օրվա իրացումից հասույթը չի կարող 960.010.000 դրամ կազմել:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ «Սվետլանա» ՍՊԸ-ի կողմից շահագործվող ՀԴՄ 960.010.000 դրամ գումարը մուտքագրվել է թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես նշված գումարը չի կարող ներառվել ընկերության իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Սվետլանա» ՍՊԸ գանգատը՝ թյուրիմացաբար հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրված գումարն իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ չներառելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ